ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՌ 01.01.2013թ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 01.01.2014թ. ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ՝ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Հարգելի համագյուղացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները:

Ֆինանսական մաս:

Եկամուտներ (մուտքային մաս)

հ/հ	Հավաքագրված հարկի անվանումը	Պլանը տարեկան	Փաստացի ծախս	%
1	Գույքահարկ շենք շինության	1550.0	1554.5	100.2
2	Գույքահարկ փոխադրամիջոցների	4051.9	4391.7	108.4
3	Հողի հարկ	6500.0	6850.0	105.0
4	Վարձակալական հողի վարձ	350.0	359.1	102.6
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	780.0	1136.3	145.0
6	Տեղական տուրք	150.0	174.0	116.0
7	Դոտացիա	16958.1	16958.1	100.0
8	Սուբվենցիա	713.4	562.1	78.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	31053.4	31986.4	103.0

Ծախսային մաս

հ/հ	Ծախսված գումարի ուղղվածությունը	Պլանը տարեկան	Փաստացի ծախս	%
1	Գյուղապետարանի աշխատավարձ	13192.8	12108.3	91.0
2	Պարգևատրում	1504.0	1120.1	74.4
3	Էներգետիկ ծառայություն	1228.0	1068.6	87.0
4	Կապի ծառայություն	200.0	102.6	51.3
5	Տեղեկատվական ծառայություն	100.0	92.8	92.8
6	Համակարգչային ծառայություն	325.0	300.0	92.0
7	Ընդհ. բնույթի այլ ծառայություն	200.0	200.0	100.0
8	Շենք և կառ. ընթացիկ նորոգում	125.0	125.0	100.0
9	Մեք. և սարք. ընթացիկ նորոգում	100.0	76.5	76.5
10	Գրասենյակային նյութեր	150.0	150.0	100.0
11	Տրանսպորտային նյութեր	400.0	400.0	100.0
12	Շենք շին. կառուցում	700.0	691.2	98.7
13	Շենք շին. կապիտալ վերանորոգում	1557.1	1532.0	98.4
14	Վարչական սարքավորումներ	900.0	663.0	73.6
15	Նախագծահետազոտ. ծախսեր	300.0	197.0	65.6
16	Նյութեր և պարագաներ	500.0	427.7	85.5

17	Աղբահանում	780.0	780.0	100.0
18	Երիտասարդական ծրագիր	325.0	170.0	52.3
19	Սուբսիդիա	10092.1	9980.0	98.0
20	Սոց օգնություն	2331.5	2331.5	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	35010.5	32515.9	92.9

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արբենյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի հունվարի 21-ին ժամը 14[00]-ին Պտղունք համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավար՝ Կարապետ Արթենյանի հաշվետվությունը 2013 թվականի կատարված աշխատանքների մասով: Հաշվետվությանը ներկա էին աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի տնօրենը, մանկապարտեզի վարիչը և կոլեկտիվը, համայնքի բնակիչները՝ թվով 20 հոգի: Ներկա էր նաև մարզպետարանի ներկայացուցիչ գյուղ բաժնի պետ՝ Վ. Աբրահամյանը: Ներկաներին համայնքի ղեկավարը ներկայացրեց 2014 թվականին կատարված աշխատանքները: Նշվեց, որ 2013 թվականին սկսվեց համայնքի զարգացման բառամյա ծրագրի իրականացման աշխատանքները:

Պտղունք համայնքի Երևան-Էջմիածին խճուղու երկու կողմերում, համայնքի կենտրոնում տեղադրվեցին ծածկով և նստատեղերով ավտոկանգառներ: Հետագայում նրանց կողքին տեղադրվեցին աղբարկղեր:

Համայնքի Մաշտոցի փ. 1-ին փակուղու վերջում գտնվող ջրանցքի վրա կառուցվեց կամուրջ, որի հետևանքով հեշտացան Թումանյան, Դպրության փողոցների բնակիչների ճանապարհային խնդիրները:

Հայէլեկտրոցանցի «Մուսալեռ» մասնաճյուղի հետ միասին վերջապես լուծվեց Պտղունք համայնքի խորքային հորի էլեկտրամատակարարման հարցը մոտակա բարձր լարման գծից միացման միջոցով լուծվեց նաև համայնքի ներսում գտնվող 30-ից ավելի տների միացումը նոր տեղադրված ենթակառույցին, որը զգալիորեն բարձրացրեց նրանց մատակարարվող հոսանքի որակը: Խորքային հորի միացման շնորհիվ լուծվեց համայնքի այգու և հարակից տնամերձ հողամասերի ջրամատակարարման հարցը:

2013 թվականին սկսվեց և ավարտվեց համայնքի այգու ցանկապատի կապիտալ վերանորոգման հարցը: Այգին և հարակից մանկական այգին ամբողջովին ցանկապատեցին մետաղական ցանկապատով: Այգու տարածքում տեղադրվեցին աղբամաններ: Տեղադրվեցին նաև փայտյա նստարաններ, թվով 4 հատ և 2 երկաթյա սեղաններ: Այգու և մանկական այգու բարեկարգման աշխատանքները կշարունակվեն հաջորդ տարիներին:

Աղբամաններ տեղադրվեցին համայնքի դպրոցին հարակից տարածքում, փոի մոտ և մանկապարտեզի մոտ:

2013 թվականին հսկայական աշխատանք կատարվեց Երևան-Էջմիածին խճուղու լուսավորման հարցում: Կառուցվեց մոտ 700 մետր երկկողմանի լուսավորության համակարգ Պտղունք համայնքի կենտրոնից մինչև Մուսալեռ համայնքի սահմանը, համայնքի կենտրոնից մինչև շրջադարձը, և Նորակերտ համայնքի վարչական տարածքից դեպի Պտղունք համայնքի ներսը մոտ 200 մետր: 2013 թվականի ընթացքում ամբողջովին վերանորոգվեց համայնքի լուսավորության գործող համակարգը, փոխվեցին այրված լամպերը, դրոսելները, իգուները: Փողոցային լուսավորություն անցկացվեց նաև Պ.Սևակի փողոցի վերջնամասում:2013 թվականին կատարվեցին համապատասխան ապրանքների գնումներ նաև համայնքի Մ. Մաշտոցի փողոցի և Երևան-Էջմիածին խճուղուց դեպի Հայկի փողոցը լուսավորության անցկացման համար, և այդ աշխատանքները կավարտվեն 2014 թվականին:

2013 թվականին կատարվեց համայնքի մանկապարտեզի բակի սալիկապատման աշխատանքներ, ինչպես նաև մանկապարտեզի բակում տեղադրված խաղերի և տաղավարների հատակների բետոնապատման աշխատանքներ:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների սկզբում մարզպետարանի աջակցմամբ համայնքում բաժանվել է 20 տոննա ազոտական պարարտանյութ և 7.2 տոննա դիզելային վառելիք:

2013 թվականի ապրիլի 23-ի լույս 24ի գիշերվա ցրտահարությունից հետո գյուղացիներին հաջողվեց մասամբ վերականգնել խաղողի բերքը: Ստեղծվեց համապատասխան հանձնաժողով , կազմվեցին ցուցակներ և ակտը ներկայացվեց մարզպետարանի գյուղ բաժին:

2013 թվականի ընթացքում համայնքի մանկապարտեզում կազմակերպվել և անցկացվել են հանդեսներ նվիրված մայրության և գեղեցկության տոնին՝ ապրիլի 7-ին, հունիսի 1-ին երեխաների պաշտպանությանն միջազգային օրվան նվիրված հանդեսներ, տարեմուտի հանդեսներ:

Շուշիի ազատագրման և հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրը կազմակերպվել է այցելություն զոհվածների շիրիմներին: Զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվել է դրամական օգնություն: Համայնքի դպրոցում սովորող 5 անապահով ընտանիքների երեխաներին տրվեց դասագրքերի գումար՝ 80000 դրամի չափով:

2013 թվականի ընթացքում անցկացվել է 11 ավագանու նիստ: Համայնքի բնակիչներին տրվել է 2331.5 հազար դրամ դրամական օգնություն: Կատարվել է շուրջ 450 բնակիչների ընդունելություն, տրվել է 381 հատ տեղեկանք:

Համայնքի ղեկավարը ամփոփելով իր խոսքը, շնորհակալություն հայտնեց Արմավիրի մարզպետարանին անձամբ մարզպետ Ա.Ղահրամանյանին համայնքին աջակցելու համար:

Այնուհետև ելույթ ունեցան համայնքի բնակիչները: Այսօր համայնքին հուզող ամենացավոտ հարցը նոր դպրոցի շինարարության հարցն է: Հարցը բարձրացվել է տարբեր ատյաններում, սակայն այն լուծում չի ստանում, իսկ գործող դպրոցում, որը գտնվում է վթարային վիճակում հնարավոր չէ ապահովվել երեխաների նորմալ ուսումնական պրոցեսը: Նշվեց նաև, որ համայնքում գնալով մեծանում է չմշակվող հողերի տարածքը, որը պայմանավորված է ոռոգման ջրի սակավությունով, ինչպես նաև ոչ շահավետ լինելու հանգամանքով:

Իր խոսքում մարզպետարանի ներկայացուցիչ գյուղ բաժնի պետ Վ. Աբրահամյանը համայնքում կատարված աշխատանքները գնահատեց բավարար և խոստացավ բնակիչների կողմից բարձրացված հարցերը ներկայացնել մարզպետարան, նրանց համապատասխան լուծում տալու նպատակով:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Ավագյան